

22.320

331

4-68

1926

331  
Գ-68

5 FEB 2007

№ 2 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀՈՍՈՐԸԿՈԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ

# ԳՅՈՒՂԱՅՈՒ ԱԶԽԱՏԱՆՔԸ

Թարգմ. Է. ԽԱՅ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

23 68  
№ 2 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 2


ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ

32238

ԳՅՈՒՂԱՅՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Թարգմ. Հ. ԽԱԶ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1926



## ԳԵՂՋՈՒԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԻՆ.

Գեղջուկի աշխատանքային տարին ամբողջովին ընթանում է արևի հետ, արշալուսից արշալույս, գարնանից-աշուն (մարտից կամ ապրիլից մինչև հոկտեմբեր):

Գարնաճայից Գարնանը, արևի թեքվելու հետ միաժամանակ աշխատանքները սկսվում են գեղջուկի աշխատանքային տարին: գլուզում. Նա պատրաստութուններ է տեսնում գարնանային և ամառային աշխատանքների համար, ձեռքն է առնում կացինն ու սղոցը, սկսում է կարգի բերել արորը, տափանն ու սայլը:

Մարտ ամսին (տեղ-տեղ ել ապրիլին) նա դաշտ է յեղնում հողը կրկին վարելու գարնանացանքսի համար, վորից հետո արդեն սկսում է ցանել: Խրվում է գութանը խոնավ հողի մեջ. — «հո, յեղը ջան», հորդորում է գեղջուկը ձմռան խղճուկ կերից նիհարած յեզանը:

Արևածագից մինչ արևի մայր մտնելը շարում է նա աղոս աղոսի յետևից. — «Վարի, յեղը ջան, աղոս արա, պոե ջան, հո, դուս ելավ, հո, յա»: Յեվ այսպես շարունակում է, մինչև վոր ուժասպառ է լինում թե ինքը և թե իր ժրաջան ընկեր յեղը, մինչև վոր վարում, ցանում և տափանում է ամբողջ արտը: Արտը թումբերով մասերի բաժանելուց հետո սերմնացանը յեղը գոգնոցից բռնով հանում է սերմը և աջ ու ձախ շաղ տալիս, վորից հետո հողով ծածկում է ցանքսը, իսկ վորդին նրա յետևից մի գույգ լծկաններով տափանում է արտը:

Ապրիլին յերեխաներն ել են գործի անցնում: Նրանք քշում են անասունները նորաբույս արոտներով ծածկված հանդերը:



հետևում է նրան ու խուրձեր կապում, վորից հետո յերեխաների հետ կրում են խուրձերը, դեղեր դնում: Մակձկոտվում են ամբողջովին գեղջկուհու ձեռքերը, կոպտանում բոլորովին, իսկ իրիկունն ել հնարավորություն չունի հանգստանալու—անհրաժեշտ է ծղնոտից խուրձեր կապելու համար պարաններ հյուսել և տնտեսութունից ել կարգի բերել այն առոյթ գործերը, ինչ վոր չեն կարողացել կատարել վոչ ծերերը և վոչ յերեխաները:

Հունձն ամեն տեղ գերանդիով չեն անում. շատ տեղեր ել մանգաղով են քաղում: Այս աշխատանքն ավելի ծանր է: Քաղում են կռացած, չորած, վորպեսզի մաքուր հնձեն: Մանգաղով այնպիսի տեղ են քաղում, ուր նոսր է լինում արտը, ուր ամեն մի հատիկը հաշվի յե առնվում: Գերանդիով թեև ավելի արագ ու թեթև է տարվում աշխատանքը, քան մանգաղով, բայց նրանով հատիկներ շատ են կորչում, փչանում: Մանգաղով հազիվ որական մի քառորդ դեսիատին քաղվի, այնինչ գերանդիով կարելի չե յերեք քառորդ դեսիատինի չափ հնձել:

Հնձելուց և խուրձ կապելուց հետո դեղերը կալն են կրում և անմիջապես կախում առաջին կալը, սերմացու և կարկանդակներ պատրաստելու համար: Համարյա չոր ու ցամաք հացով ու ջրով են սնվում գյուղացիք աշխատանքի այս ծանր օրերին. չկա կերակուր պատրաստող, յեթե կերակուր ել պատրաստում են, հաց բերող աղջիկը մինչև հանդ է հասցնում, սառնում և կերակուրը, և, բացի այդ՝ ինչ ունեն, վոր ինչ պատրաստեն:—արդեն յեղած-չեղածը կերել, սպառել են ձմռանն ու գարնանը: Ահա թե ինչո՞ւ շտապում են առաջին կալից կարկանդակներ պատրաստել:

Գյուղացու առ-  
նահային առ-  
խառնեցեք: Ոգոստոսի սկզբներից սկսած, համարյա ամբողջ ձմեռը Ռուսաստանի գյուղերում լսվում է ցորենի թմբիչների թրխկոցը: Որական մի դեղից (52 խուրձ) ավելի վոչվոք չի կարողանում կալսել, այն ել, իհարկե, յերբ դեռ ցորենը յերկար է լինում և յեղանակը՝ չորային: Հենց այդ պատճառով ել այնտեղ կախումը ձգձգվում է մինչև համարյա ձմեռվա վերջերը: Նիժեգորոդյան

նահանգում կալսելն ավելի դանդաղ է առաջ գնում, ուր թմբիչներով չեն թակում, այլ գերանե իշուկներին խփելով են ցորենը թակում:

Շատ անգամ հաշանի խոնավության պատճառով կալսելը դանդաղում է: Այդ դեպքում ստիպված են լինում հաշանը չորացնել խրճարանը տաքացնելու միջոցով:

Դեռ հազիվ սկսած են լինում կալսելը, մեկ ել տեսար հասավ աշնանային ցանքսի ժամանակը: Այդ րոպեն աչքաթող անել չի կարելի: Յեթե անմիջապես անձրևից հետո ցանելին, ապա բերք կունենան: Յերբեմն անձրևների բացակայության պատճառով գետինը չորացած, ձաքճած է լինում. այդ ժամանակ միտք չունի ցանել. սերմը չի բուսնի, և դեռ փասակար միջատներն ել կուտեն, կփչացնեն:

Ոգոստոսի վերջերին ցանքսը վերջանում է: Նորից գեղջուկը դաշտ է յեկնում, այս անգամ ել հնձած արտատեղը ցել անելու գարնանացանքսի համար:

Այս ծանր աշխատանքների պատճառով բոլորովին հալից ընկնում է գեղջուկը, բոլորովին նիհարում է նմանապես նրա ժրաշան յեզը: Գարնանից մինչև աշնան վերջերն անընդհատ որական տասն և ութ ժամ է աշխատում նա, այն ել չափազանց աղքատիկ սննդով: Ուժասպառ է յեղել նաև գեղջկուհին, աշխատելով թե տանը և թե դաշտում: Սրա բանվորական օրն ել 18 ժամ է, գուցե և ել ավելի:

Յերեխաները, դեռ 8 տարին չլրացրած, արդեն աշխատանքի մեջ են. վորն անասուններ է արածացնում, վորը խոտ է հավաքում, վոմանք ել վար ու հնձին են ոգնում: Գյուղական ամենածանր ու սև աշխատանքները կատարում են 15-ին հասած պատանիները:

Յեվ այսպես, գարուն ու ամառ, մինչև ձյան թափվելն աշխատում է գեղջուկը սոսկ ձեռքերով, հսկայական յեռանդ սպառում առանց մեքենայի, առանց գիտության ոգնության, չգուշակելով՝ արդյոք յերկինքը կողորմա իրեն, թե յերաշտ, կարկուտ, մորեխ, մկներ կուղարկի ու կվոչնչացնի իր համառ աշխատանքի պտուղը:

Գյուղում աշնան վերջերին քիչ աշխատանքներ կան: Այդ ժամանակամիջոցն ոգտագործում են հարսանիքների ու տոնա- կան զվարճությունների համար: Բայց ավել կամ պակաս այդ կուշտ սրերը լերկար չեն տևում: Արդեն նոր տարվա մոտեր- քին Ս. Ս. Հ. Մ. մեծ մասում գյուղացիք սպառած են լինում իրենց պաշարը, ստիպված են կողմնակի լեկամուտ փնտռել: Յեռամյա ցանքսը և հողի հին ձևով մշակումը չեն կարող ապա- հովել գյուղացուն:

Ձմռանն աշխա- Սովորաբար նոր տարուց հետո գյուղացիք շա- օսնքի գնալը. րան-շարան քաղաք են դիմում աշխատանքի, մտնում են գործարան, հանքահորեր, դառնում են փայտահատ, կառավար: Ձմեռը գյուղացիք լերկու, յերեք, յերբեմն ել չորս ամսով կտրված են լինում տնից:

Բայց ամեն տեղ ել միայն գյուղից դուրս չե, վոր գեղ- ջուկը կողմնակի յեկամուտ ե գտնում: Նա պարապում են ունյ- պես տնային ու տնայնագործական աշխատանքներով:

Տնային աշխատ- Պետք ե ասել, վոր Ս. Ս. Հ. Մ. ում շատ չեն ցերք գյուղում. այնպիսի գյուղեր, ուր զբաղվեն տնային ա- հետներով: Մի տեղ կտավ են գործում, մի տեղ սալ են շի- նում, կավե ամաններ պատրաստում, մի այլ տեղ խաղալիք- ներ, ժանյակ (հաշիա) գործում, և այլն և այլն:

Աշունը գալիս ե թե չե, կանայք դուրս են հանում վոս- տանանկի դադգյահը, հինում են և դեռ լույսը չբացված սկսում են գործել, աշխատում են նույնպես գիշերը կանթեղի, պատ- րուզե ճրագի կամ լամպի լուսով: Յերեխաներն ել են ոգ- նում. փաթաթում ու վրա յեն տալիս թելերը, իսկ ավելի մե- ծերը թել են վորորում և իրենք ել գործում: Սրան գուզընթաց, նրանք, իհարկե, յեփել-թխելու աշխատանքներն ել են կատա- րում, փոքր յերեխաների ու անասունների հոգսը շաշում: Կանայք են վուշն արժատահան անում, թրջում և ապա սկի- սում գզել ու թակել: Այնուհետև այդ բարակ հյուսերից ձեռ- քով մանվածք են մանում, թելեր վորորում: Հազվագյուտ դեպ- քում կարելի կլինի վոտքի ճախարակ գտնել: Սովորաբար աղ-

ջիկները կամ յերիտասարդ կանայք պատրաստում են մանվածք ու թելեր, իսկ հասակավոր կանայք գործում են:

Տնայնագործա- Բայց կան այնպիսի գյուղեր, ուր կլոր տա- կան աշխատանք- րին արհեստը ձեռքից վայր չեն գցում: Նշա- րը ձմռանը. նակում ե՝ այդ գյուղը չարչի գնորդ ե յեկել, վորի պատվերները հասցնելու համար ստիպված են ամբողջ տարին աշխատել: Յերկրագործությունը հնարավորություն ե տալիս այդպիսի տեղերում միայն միքանի ամսվա պաշար ձեռք բերել, իսկ տնայնագործական արհեստներն՝ ամբողջ տարին: Հենց այդ հանգամանքից ել ոգտվում ե չարչի գնոր- դը շահագործելու և՛ մեծին և՛ փոքրին:

Կան գյուղեր ել, ուր գյուղացիք կավագործական խմբակ- ներ են կազմում և ամանեղեններ են պատրաստում: Կանայք ու յերեխաները կավ են հունցում և նախշում պատրաստի ամանները: Կամ ամբողջ ընտանիքն աշնանից սկսած նստում հաշիա յե գործում կոճերի վրա: Շատ հաճախ գյուղացին, կինն ու յերեխաները հասարակ դանակով լորի փայտից տա- շում, գգալներ, խաղալիքներ, ամեն տեսակի փայտյա ամանե- դեններ են շինում:

Գյուղական ընտանիքը յերբեմն ել նստում, կոշիկներ ե կարում կամ ձիու վորեն սարք ու կարգ, սանձեր, պատրաս- տում: Յեվ այս բոլոր աշխատանքները վոչ թե մեքենաներով, գործիքներով են կատարում, այլ ձեռքերով: Բանվորական որը 10—12 ժամ ե տևում, և խղճուկ աշխատավարձ ե ստացվում: Յեվ այսպես շարունակվում ե մինչև գարուն, իսկ այնուհե- տև նորից սկսվում ե գեղջուկի աշխատանքային տարին: Նո- րից կարգի յե բերում արորը, տափանը և սալը գարնանային և ամառային աշխատանքների համար:

Այսպես ե ընթանում գեղջուկի աշխատանքը, և այդպես ե այն ժամանակ, յերբ նա ամեն ինչ կատարում ե ձեռքերով, միայնակ և վոչ մեքենաներով, հավաքական ուժերով և գի- տության ոգնությամբ:

Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ

## ԳՅՈՒՂԱՑՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գյուղացու որվա ժամերի դասավորութիւնը շատ խիստ չափով տատանումների յե յենթարկվում տարվա յեղանակների պատճառով: Ուստի մենք այս յերևութը պիտի ուսումնասիրենք ձմեռվա ու ամառվա համար առանձին-առանձին: Ամառային ժամանակը պիտի հաշվել ապրիլից—հոկտեմբեր, իսկ ձմեռայինը—մնացած ժամանակը: Գյուղական ընտանիքի ամառային ի որերի կարգն իր ընդհանուր ստորաբաժանումներով յուր յց ե տված առաջիկա աղյուսակում:

Գյուղացու աշխատանքային օրվա ընդհանուր տևողութիւնը 14—15 ժամի յե հասնում:

Մեր հաշվով, բատրակները մի ժամով պակաս են աշխատում, քան գյուղական ընտանիքների անդամները: Բայց յեթե հաշվի չառնենք ազատ աշխատանքը և նույնպես տնային ամեն տեսակ «առորյա» անխուսափելի գործերի առթիվ ժամավաճառութիւնները, ինչպես, որինակ՝ տնային տնտեսութեան, հանդ գնալու, շուկա գնալու մեջ, և այլն, ապա դուրս կգա, վոր գեղջուկի բանվորական որը, նույնիսկ ամառվա ընթացքում, անզգալի չափով 9 ժամից բարձրանում, հասնում ե 10—11 ժամի՝ տղամարդկանց համար, իսկ կանանց համար՝ իջնում ե մինչև 8—7 ժամի: Պարտադիր արտադրողական աշխատանքները բատրակներից ամառը խլում են որական 11,5 ժամից վոչ պակաս, ուրեմն, զգալի չափով ավելի, քան սեփականատեր ընտանիքի յուրաքանչյուր անդամից:

Յեթե հաշվի առնենք գյուղական տնտեսութեան առորյա աշխատանքների կորուստը և համեմատենք «արտադրողական» աշխատանքի հետ, վորը նրան վորոշակի տնտեսական հետևանքների յե հասցնում, այսինքն, աշխատանքի արդյունքը շոշափելի յե դարձնում բերքով կամ դրամականի միջոցով («աշխատավարձ»), ապա միջին թվով ամբողջ ընտանիքի համար այդ առորյա հավելումները—5 ժամ 8 րոպեն, հավասար ե «արտադրողականի» 56<sup>0</sup>/<sub>0</sub>-ին: Իհարկե, բավականին պատկառելի մե-

ծութիւն ե այս: Հերթական ժամավաճառութիւնների այս մեծագույն մասը վատնվում ե, իհարկե, ընտանիքի սովորական կարիքների համար: Հատկապես դրանով զբաղվում են կանայք: Տղամարդկանց համար հերթական ժամավաճառութիւնը անհամեմատ ավելի փոքր տոկոսով ե արտահայտվում: Ամառը տան մեծի համար 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ից աչն կողմը չի անցնում, այնինչ կանանց, մասնավորապես տանտիրիներին համար՝ հասնում ե արտադրական աշխատանքի 102<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ ձմեռն ել ավելի բարձր:

Տնային աշխատանքը բոլորովին չի գնահատվում, վորովհետև նրա արդյունքը շուկա դուրս չի բերվում: Կամ, աշխատանքն անօգտ, տնային աշխատանքը «գնահատվում» ե վոչ վորպես արտադրողական: Յեվ դրա համար ել աչն կանանց դրութիւնը, վորոնք հատկապես զբաղված են այդ աշխատանքներով, գյուղական ընտանիքում չի կարող առանձնապես նախանձելի լինել այդ նույն ընտանիքի աչն մյուս անդամների համեմատութեամբ, վորոնք հատկապես զբաղված են «արտադրողական» աշխատանքներով: Պրոլետարական ընտանիքում, ուր ինքը կինը տղամարդուն հավասար աշխատավարձ ե տուն բերում, իհարկե, անհամեմատ ավելի նախանձելի ու անկախ վիճակ ունի:

Ամառային հանգիստն ու քունը գյուղական հանգիստը չեվ ընտանիքում շատ կարճատե ե: Յեվ ուրիշ կերպ ել լինել չի կարող այն ժամանակ, յերբ բանվորական որը հասնում ե 14—15 ժամի:

Գյուղացու ձմեռային բանվորական որը կրճատվում, հասնում ե նվազագույն չափի. դրա փոխարեն հանգստյան ու քնի ժամերը համապատասխան չափով աճում են:

Ամառվա դաշտային և բանջարանոցային աշխատանքները վերջանալուց հետո գյուղացու բանվորական որն իջնում ե 2 ժամի, իսկ կնոջը՝ 4 ժամի. ամբողջ ընտանիքի աշխատանքի ժամանակա՛րիջոցը, միջին թվով, հասնում ե 3,5 ժամի:

Նույնիսկ բատրակները ձմեռ ժամանակ որական 1.5 ժամից ավելի արտադրական աշխատանք ցույց չեն տալիս: Յեթե հնարավոր լիներ վորեւ արտադրողական աշխատանքով զբաղեցնել, հավանորեն, գոնե նրանց թույլ չեյին տա «ծուլանալու»:

Սրանից յեզրակացնում ենք.— Ձմեռվա աշխատանքը հեբիք չե անում գյուղացուն: Այս դեպքում մենք գործ ունենք չձևակերպված, սովորական սեզոնային անգործություն հետ:

Յեթե հիմք ընդունենք ութժամյա բանվորական որվա նորման և հաշվի առնենք, վոր տնային աշխատանքները ձմեռվա ընթացքում ամբողջովին կանայք են կատարում, ապա կարող ենք հետևյալի, վոր գյուղի բոլոր տղամարդ ուժերի արտադրական աշխատանքն ութժամյա բանվորական նորմայի 25 %-ին ել չի հավասարվում: Ասել ե թե գյուղական տնտեսություն մեջ աշխատող տղամարդկանց ուժերի յերեք քառորդ մասը ձմեռն անգործություն ե մատնված:

Անհետաքրքրական չի լինի համեմատել գյուղացու և բանվորի աշխատանքային որվա ժամերի դասավորությունը: Քիչ թե շատ, ընդհանուր գծերով, հետևյալ աղյուսակներում բերված ե այդ ժամերի համեմատական պատկերը (նայել 13-րդ յերեսի աղյուսակը):

Գյուղացու յեվ Ինչպես վերը տեսանք, ամառը գյուղացիք վարձու բանվորի ձմեռային ավելի շատ են ծանրաբեռնված լինում պարտադիր աշխատանքներով, քան բանվորները: Բայց յեթե վերցնենք տարեկան միջին նորման, այդ դեպքում հակադարձ համեմատություն կստացվի: Առանձնապես այդ նկատելի չե տղամարդկանց նկատմամբ, վորոնք շատ քիչ ժամանակ են տալիս տնային աշխատանքներին: Գեղջկուհու արտադրական որը, վոր ամառը հասնում ե 8 ժամի, ձմեռ ժամանակ համարյա կիսով չափ կրճատվում ե: Իսկ գեղջուկի արտադրական որն ամառվանից մինչև ձմեռ 10.6-ից իջնում ե 2 ժամի, այսինքն պակասում ե մոտավորապես 5 անգամ:

Այս բոլորից հետևում ե, վոր գյուղացու արտադրական որը միջին թվով (տարեկան) 6 ժամ 17 րոպե յե, վորը 26% -ով պակաս ե գործարանական բանվորի որից (8 ժամ 32 րոպե):

Առաջին հայացքից բավականին անսպասելի յեզրակացություն ենք հանգում, բայց վերը հիշած սեզոնային գաղթի յերևույթի հետ միասին վերցրած՝ միանգամայն բնական ե յերևում: Բանվորական ավելի կարճ որը, իհարկե, գյուղացուն ավելի տևական հանգիստ ե տալիս քաղաքի բանվորների համեմատությամբ: Չնայելով դրան, գյուղում այդ հանգստից ոգտվելը, մանավանդ գեղջկուհիների կողմից, անհամեմատ նվազ խելացի ձևով ե կատարվում, քան քաղաքում: Բավական ե, որինակ, մատնացույց անել, վոր լրագրության, գրքերին, զպրոցին և ամեն տեսակի հասարակական գործունեյություն գյուղացին 20 անգամ ավելի պակաս ժամանակ ե հատկացնում, քան քաղաքի բանվորուհին, չնայելով վոր սա յեկ այդպիսի գործունեյություն արական լրիվ ժամեր չի կարողանում հատկացնել:

Գյուղացու յեվ բանվորի լի որը ժամերով յեվ րոպեներով (սեկ աշխատավորին):

| Ժամեր վաճենու<br>բնույթը | Գ ե դ ջ ու կ ի |       |         | Գ ե դ ջ կ ու հ ու |       |         | Վարձու<br>բանվորի |        |
|--------------------------|----------------|-------|---------|-------------------|-------|---------|-------------------|--------|
|                          | Ամառը          | Ձմեռը | Տարեկան | Ամառը             | Ձմեռը | Տարեկան | Տղամարդ.          | Կանայք |
|                          | ժ. Բ.          | ժ. Բ. | ժ. Բ.   | ժ. Բ.             | ժ. Բ. | ժ. Բ.   | ժ. Բ.             | ժ. Բ.  |
| I. Աշխատանք              |                |       |         |                   |       |         |                   |        |
| ա. Պարտադիր              |                |       |         |                   |       |         |                   |        |
| 1. Արտադրական            | 10,36          | 1,58  | 6,17    | 8,10              | 4,11  | 6,11    | 8,32              | 8,09   |
| 2. Տնային                | 1,24           | 2,12  | 1,48    | 6,02              | 6,52  | 6,27    | 2,08              | 5,12   |
| 3. Այլ և այլ             | 1,30           | — 44  | 1,07    | — 49              | — 05  | — 27    | — 51              | — 35   |
| Գումարը                  | 13,30          | 4,54  | 9,12    | 15,01             | 11,08 | 13,05   | 11,31             | 13,56  |
| բ. Ազատ                  | — 54           | — 57  | — 55    | — 01              | — 05  | — 03    | 1,03              | — 59   |
| Աշխատանքի<br>գումարը     | 14,24          | 5,51  | 10,07   | 15,02             | 11,13 | 13,08   | 12,34             | 14,55  |
| II. Հանգիստ              | 3,29           | 8,44  | 6,07    | 2,51              | 4,36  | 3,43    | 3,27              | 2,21   |
| III. Քուն                | 6,07           | 9,25  | 7,46    | 6,07              | 8,11  | 7,09    | 7,59              | 6,44   |
| Ընդամենը<br>որվա մեջ     | 24—            | 24—   | 24—     | 24—               | 24—   | 24—     | 24—               | 24—    |
| Նույնը % -ով             |                |       |         |                   |       |         |                   |        |
| 1. Աշխատանքի             | 60,0           | 24,4  | 42,2    | 62,6              | 46,7  | 54,7    | 52,4              | 62,9   |
| 2. Հանգստի               | 14,5           | 36,4  | 25,5    | 11,9              | 19,2  | 15,5    | 14,3              | 9,8    |
| 3. Քնի                   | 25,5           | 39,2  | 32,3    | 25,5              | 34,1  | 29,8    | 33,3              | 28,0   |

Գյուղացու  
ֆուգը

Ձմեռն աշխատանքները կրճատելով, գյուղացին իր ակամա ազատ ժամերի մեծ մասը հատկացնում է քնի: Գյուղացիք ձմեռը 2 - 3 ժամ ավելի յեն քնում, քան ամառը: Այնուամենայնիվ, տարվա ընթացքում միջին թվով գյուղացու քունը 7,5 ժամի չի հասնում: Միևնույն ժամանակ քնորոշ ե, վոր գյուղացիք ավելի շատ ամառն են ցերեկ ժամանակ քնում, քան ձմեռը: Ինչպես յերևում է, ճաշից հետո քնելը վոչ թե ավելորդ ազատ ժամեր ունենալուց է, այլ, ընդհանրապես, ամառային յերկար բանվորական որերի հոգնածությունն են թեթևացնում կարճ գիշերների չափազանց կարճատև քնի հանդեպ: Ահա թե ինչո՞ւ մենք ձմեռը և ամառը ցերեկվա ու գիշերվա քնի տևողության մեջ հակառակ յերեվոյթն ենք դիտում:

Առխառնագ  
սոցոցեր:

Տոն որերին, նույնիսկ ամառը, գյուղատուն տեսական արտադրական աշխատանքներին հատկացրած ժամանակն զգալի չափով կրճատվում է: Տնային աշխատանքն, իհարկե, համարյա թե չի կրճատվում տոն որերին: Ընտանիքի բոլոր անդամները տոներին քիչ ավելի յերկար են քնում, քան լի որերը:

Գյուղացու  
հակաց  
ժամերը:

Այս գվարճությունների ժամանակաշրջանը գյուղում այնքան է սահմանափակված, վոր համարյա թե կիրակի որերի ազատ ժամանակի <sup>3</sup>/<sub>4</sub> մասը նախորոք տնորինված չի լինում: Հարցովորձի յենթարկվածները չեն կարողացել վոչ իրենց, վոչ ել հետազոտող ցուցակագրողներին պարզ ու մեկին հաշիվ տալ, թե իսկպես ո՞ւր և ի՞նչ գործերի վրա յեն կորչում կիրակի որերի այդ բավականին յերկար ազատ ժամերը:

Ձմեռային տոները գյուղում վորոշ չափով տարբերվում են ամառայինից:

Այս պատկերն ունի գյուղական ընտանիքի որերի դասավորությունը:

Բացակայից  
առխառնագ

Ձեռք բերած տեղեկություններից կարելի յե յեզրակացնել, վոր գյուղական ընտանիքում բատրակն ամառվա ընթացքում գործատիրոջ արտադրողական աշխատանքների վրա աշխատում է վոչ պակաս 11,5 ժամից, բա-

ցի այդ, իր տան վրա յել որական 2 ժամ է կորցնում: Իսկ ձմեռը՝ սովորաբար նրանք այդպիսի աշխատանքներ չեն կատարում:

Բացակայից  
վորակաց  
մանակը:

Բատրակի բանվորական տարին տևում է 255-ից մինչև 304 որ, իսկ բանվորական որը, նայելով տարվա յեղանակներին, 3 ժամից հասնում է մինչև 15 ժամի: Ընդհանրապես ասած՝ ձմեռն այդ ժամերի թիվը հասնում է նվազագույն չափերի: միայն Մինսկի նահանգում բատրակները ձմեռն ել վորեւե աշխատանք են գտնում, և նույնիսկ ավելի մեծ չափով, քան աշնանը: Մի կողմ թողնելով, սակայն, տեղական այս առանձնահատկությունները, տեսնում ենք, վոր բատրակի միջին բանվորական տարին հասնում է 270 որի, իսկ միջին բանվորական որը՝ 11 ժամի: Ժամերի թիվը բավականին զգալի յե, յեթե առանձնապես բաղդատելու լինենք այն մեր որենսզրքով սրբագործված ութժամյա աշխատանքի չափի հետ:

Բանվորական  
ժամացակ  
կորգայից  
սոցոցերի  
մեջ:

Այլ կերպ է դրված գործը խորհրդային տնտեսության մեջ: Այստեղ, 1923 թ. ամառվա հետազոտությունների համաձայն, հողի ևանտառի միության բանվորների բանվորական որն զգալի չափով կարճ է: Խոր-տնտեսության մեջ բանվորական որը, ըստ յերևութին, տարվա յեղանակներին նայելով, ավելի համաչափ է փոփոխության յենթարկվում, քան գյուղական տնտեսությունների մեջ: Բոլոր նահանգներումն ել ձմեռվա և ամառվա մեջ միջին թվով տարբերությունը մեկ ժամից այն կողմ չի անցնում:

Այդ նպատակին հասնում են, յերևի, ամառային տաժանելի աշխատանքների ժամանակ որով աշխատող լրացուցիչ բանվորական ձեռքեր վարձելու միջոցով:

Չնայելով այդ հանգամանքին, 8-ժամյա որը, համարյա ամեն տեղ, ի հաշիվ արտաժամյա աշխատանքների՝ վեր է ածվում 9 ժամի, միջանի նահանգներում նույնիսկ 10 ժամի: Ինչպես ցույց են տալիս մերձմոսկովյան շրջանի տվյալները՝ ծառայողների վերաբերմամբ, — և Կուրսկի նահանգում — բան-

վորները վերաբերմամբ, գյուղական տնտեսությունների մեջ, ըստ յերևութի՛ն, աճան ել դժվար չի լինում 8 ժամյա նորման պահպանել: Յեվ յեթե վորոշ տեղերում, այսպես թե աճան, արտաժամյա աշխատանքները կիրառվում են մեծ չափերով, այն ել ամբողջ տարին, ապա այդպիսի վայրերում, ակնհայտ է, վոր առհասարակ այդ կախված է վոր աճան յերկրագործական աշխատանքների առանձնահատկություններից, վորքան գործը վատ կազմակերպելուց, ցածր վարձատրությունից և ել ավելի այս կամ այն խորհրդային տնտեսությունների մեջ աշխատանքի ցածր արտադրողականությունից: Խորհրդային տնտեսությունների մեջ, սույն միություն տված տեղեկությունների համաձայն, բատրակների համար բանվորական տարվա ընդհանուր տևողությունը հասնում է 281 օրվա, իսկ ծառայող գյուղատնտեսների համար՝ 302 օրվա:

Բանվորական Տնային աշխատանքներն ել իր՝ բանվորի վրա ուր խորհրդային հաշված, նրա բանվորական օրը խորհրդային տնտեսությունների մեջ, ինչպես տեսանք, քարձրանում, հասնում է 10,5 ժամի: Յեվ յեթե ամառային այս նորման քարձրանալով հասնի նույնիսկ 10,8 ժամի, գյուղական 13,5-ժամյա սովորական ամառային նորմայից նկատելի չափով պակաս է մնում, չնայելով դրան՝ նորից 14%-ով գյուղացու տարեկան (9,2 ժամ) նորմայից քարձր է, մյուս կողմից ել գործարանային բանվորի (11,5 ժամ) նորմայից առնվազն մեկ ժամով յետ է մնում: Բայց յեթե դուրս գանք խորհրդային տնտեսության մեջ անասունների խնամքին հատկացրած ժամանակի վատնումը, վորի մասին քաղաքի բանվորը գաղափար չունի, ապա վերը հիշած նորմաների տարբերությունը վորոշ չափով կհարթվի:

Գյուղացու արտադրական աշխատանքի ամենագրական առաջադրանք. Գյուղական արտադրական աշխատանքի ամենամեծ մասը, այն է՝ 25%-ը կլանում են այն աշխատանքները, վորոնք կապված են կալի և դաշտի յերկրագործական աշխատանքների հետ: Գյուղատնտեսական աշխատանքի մեջ յերկրորդ տեղը բռնում է անասնապահությունը, հաշված նաև կանանց աշխատանքը կաթնատնտեսության մեջ: Սա յեկ կլանում է գյուղատնտեսական ընտանիքի արտադրական աշխատանքի 16,4%-ը: Այգեգոր-

ծությունն ու բանջարաբուծությունը բռնում է նույն գումարը 9,2%-ը: Սակայն, վերը հիշած բոլոր աշխատանքների ընդհանուր գումարը, նույնիսկ վորոնեթի նահանգում, ուր տնայնագործական պարամունքներն առանձնապես ընդարձակ ծավալ չեն ստացել, 77,6%-ի չե հասնում, իսկ մնացած 22,4%-ը հատկացվում է տնայնագործական պարամունքներին (19,4%) և սեփական տնտեսության համար պետք յեղած վառելիքի պատրաստության (3%):


Գյուղացու արտադրական աշխատանքը

Սեփական տնտեսության մեջ բանվորին, տարվա ընթացքում, ժամերով (հաշված և տոները).—

1007  
32238

3740

| ԺԱՄԱՆԱԿԸ ՎԱՏՆԵԼՈՒ ԲՆՈՒՅԹԸ          | Տնտեսության գլխավոր | Տնային տնտեսություն | Ոմանդակողներ |        | Ընտանիքի բոլոր աշխատավորները |               |
|------------------------------------|---------------------|---------------------|--------------|--------|------------------------------|---------------|
|                                    |                     |                     | Տղամ.        | Նիւն   | Ժամով                        | % այլն գումար |
| <b>Առագրական աշխատանք</b>          |                     |                     |              |        |                              |               |
| Ա. գյուղ. տնտ. աշխատանքները        |                     |                     |              |        |                              |               |
| ա. դաշտում                         | 1057,6              | 488,5               | 940,5        | 462,2  | 715,7                        | 40,9          |
| բ. այգում ու բանջարանոցում         | 67,8                | 201,3               | 119,8        | 243,6  | 160,8                        | 9,2           |
| գ. կալում                          | 206,6               | 140,5               | 273,1        | 200,4  | 194,5                        | 11,1          |
| դ. անասունների հոգալու             | 385,8               | 116,5               | 384,7        | 57,6   | 219,5                        | 12,5          |
| ե. կաթնատնտեսության մեջ            |                     |                     |              |        |                              |               |
| 1. կովերը կթելուն                  | —                   | 171,3               | —            | 36,2   | 60,8                         | 3,5           |
| 2. յուղ պատրաստելուն               | —                   | 15,7                | —            | 5,2    | 6,1                          | 0,4           |
| Ընդամենը գյուղ. տնտ. աշխատանքներին | 1717,8              | 1133,8              | 1718,1       | 1005,2 | 1357,4                       | 77,6          |
| Բ. վառելափայտ պատրաստելու          | 45,1                | 90,2                | 59,8         | 12,7   | 52,3                         | 3,0           |
| Գ. Տնայնագործարան. աշխատանք        |                     |                     |              |        |                              |               |
| ա. ծախու աշխատանքներին             | 27,9                | —                   | —            | —      | 8,4                          | 0,5           |
| բ. իրենց համար գործելմանելուն      | —                   | 480,1               | —            | 721,3  | 331,5                        | 18,9          |
| Ընդամենը արհեստներին               | 27,9                | 480,1               | —            | 721,3  | 339,9                        | 19,4          |
| Ընդամենը արտադրական աշխատ.         | 1790,8              | 1704,1              | 1777,9       | 1739,2 | 1749,6                       | 100,0         |



Առանձնապես բյուջեյի խոշոր հոդվածը կազմում է թե՛ մանել-գործելը՝ գյուղական ընտանիքի սեփական կարիքների համար: Յեթե կարելի լինի վորոնեթի նորման ծավալել Ռուսաստանի ամբողջ հարյուր միլիոն գյուղական ազգաբնակչության վրա, ապա կստացվի վոչ պակաս 20 միլիարդ մարդ-ժամից, կամ 2,5 միլիարդ 8-ժամյա մարդ-որերից, վորպիսի ժամանակի քանակություն ունի գյուղացին ամեն տարի գործադրում է իր տնայնա-տնտեսական զբաղմունքների վրա: Այս քանակն առնվազն յերեսուն անգամ գերազանցում է անկվածային արդյունագործության բոլոր գործարաններում գործադրած ժամերի գումարին: Բայց վերջինս իր արտադրությունը, ինչպես հայտնի յե, ծառայում է վոչ միայն քաղաքին, այլ և գյուղական պետքերի բավականին զգալի մասին: Յեթե ընդունենք, վոր գործարանային արդյունագործությունը հագուստեղեններ մատակարարելու կողմից բավարարում է յերկրի միայն չորսորդ մասին, իսկ տնայինը՝ մնացած յերեք բառորդ մասին, այդ դեպքում ել տնային արտադրության միություն կազմող միջերջի վրա կորցրած ժամանակը տասն անգամ ավելի յե՝ գործարանա-ֆաբրիկայինի համեմատությամբ:

Կանաչ գբաղ- Զատկապես կանաչի պարապմունքը կարելի մուճբը: Կանա- յե համարել միայն կաթնատնտեսությունը և ցի աշխատանքը: մանել-գործելը: Առաջինով մեծ մասամբ պարապում են տանտիկինները, իսկ մասնավորապես յերկրորդով՝ մնացած կանայք: Մնացած բոլոր աշխատանքների մեջ մասնակցում են յերկու սեռի աշխատավորները: Բայց այստեղ ել կարելի յե միքանի ելական տարբերություններ նկատել: Այսպես, որինակ, կալում և արտում տանտիկինները շատ ավելի պակաս են աշխատում, քան ընտանիքի մեծերը, իսկ այգում ու բանջարանոցում, ընդհակառակը, շատ ավելի:

Անասունների հոգալուն և կովեր կթելուն տանտիկինները տարվա ընթացքում շատ ավելի որեր են նվիրում: Տղամարդիկ ել կենդանիներին նայելու համար շաբաթական 4 որ են նվիրում: Այգում և բանջարանոցում կանայք միքանի անգամ ավելի հաճախ են յերևում, քան տղամարդիկ:

Ըստ Ս. ՍՏՐՈՒՄԻԼԻՆԻ

(«Ռուսական քանվորի յեվ գյուղացու ժամանակի բյուջեն»).

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

Նոր մեծացում. Մինչև հեղափոխությունը շատ քիչ ելին ըգբաղվում աշխատանքի հարցով: Աշխատանքը հետաքրքրում եր այն չափով, ինչ չափով նա ոգուտ եր բերում գրամատիրոջն ու կալվածատիրոջը—և միայն այդքան: Բայց վոր աշխատանքը դարձնելին ավելի արտադրական և առողջ, թեթևացնելին մեքենայով, անվտանգ դարձնելին արտադրական փասակար պայմաններից, — այդ մասին անցյալում շատ քիչ ելին մտածում: Այժմ ե, վոր այդ հարցերի ուսումնասիրությունը առաջնակարգ նշանակություն է ստանում:

Աշխատանքն ուսումնասիրող բոլոր անելիքները գլխավոր նպատակ են դրել պարզել հետևյալ հիմնական հարցը, — ինչպես պետք է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, վոչ ի փաս աշխատողները կյանքի և առողջություն:

Խ Ս. Հ. Մ. գյուղական տնտեսությունը կրում են իրենց վրա տասնյակ-միլիոնավոր գյուղացիներ, խորհրդային տնտեսություն բանվորներ, գյուղատնտեսներ, հողաչափներ, բատրակներ, փորձակայանների աշխատավորներ և այլն: Գյուղական և անտառային տնտեսության բոլոր այս աշխատավորներն ապրում ու բանում են տարբեր պայմաններում, և աշխատավորների քանակն ել տարբեր տնտեսություններում միաչափ չե:

Մի տեսենք, թե ինչպես է աշխատում ու ապրում կոմսոնարն ու մասնավոր մանր տնտեսություն ունեցող գյուղացին:

Այստեղ բացարձակապես կհամոզվենք, թե ինչ չափով և ինչո՛ւ, տնտեսությունը վարելիս, ավելի ձեռնտու յե մտնել արտեսների, կոմսոնարների և զանազան գյուղատնտեսական կոոպերատիվների մեջ, և այդտեղ կերևա, թե ինչպես են ապրում, ինչո՛վ են սնվում և ինչպես են աշխատում գյուղատնտեսական բանվորները, մասնագետներն ու գյուղացիները Խ.Ս.Հ.Մ. զանազան վայրերում: Այստեղ պարզ յերևում է, վոր խորհրդային իշխանության ամրապնդումը—ճիշտ ե, վոչ այնքան արագ, բայց անշեղ ու շեշտակի տանում է դեպի անտառային և գյուղատնտեսական աշխատավորների վիճակի բարելավումը:

Գիտութիւնը հսկայական լուսավոր ուժ է, հզոր լծակ, վորը բարձրացնում է մեզ գեպի բախտավոր ապագան: Ապա նայեցեք, թե ինչպես բանվորա-գյուղացիական իշխանութիւնը տանում է մեզ խավարից գեպի լույս ու գիտութիւն, վորոնց շնորհիվ մենք կարող ենք ավելի լավ ոգտագործել մեր ուժերը, մեր աշխատանքները, և կառուցել նոր, լուսավոր յերջանկութիւն ու ցնծութիւն աշխարհ:

Համահեծող-  
աշխի գործու-  
նեյութիւնը. Համանտնողաշխ (Համառուսական անտառա-  
հողային արտադրական աշխատավորների միութիւն) միացնում է բազմահազար գյուղատնտեսական բանվոր բաժնակներին, անտառային և գյուղատնտեսական մասնագետներին, վորոնք սեփական տնտեսութիւն չունենալով, վաճառում են իրենց բանվորական ուժը: Մինչև հեղափոխութիւնը բաժնակից ել ավելի խավար, ճնշված ու չքավորը չկար:

Պարապելով իր ուժերից բարձր ու ծանր աշխատանքով, բաժնակն անխղճորեն շահագործվում էր ազան կուլակի ու տղրուկ կալվածատիրոջ կողմից: Ծնունդ առած հողի և անտառի աշխատավորների միութիւնը հինգ տարվա ընթացքում ավերակից, մեծացավ և այժմ հանդիսանում է մի հզոր կազմակերպութիւն, վոր անընդհատ ու անդադրում աշխատում է Ս. Ս. Հ. Մ. գյուղատնտեսութիւնը բարձրացնելու և խորացնելու: Համանտնողաշխ հանդիսանում է բանվոր դասակարգի և գյուղացիութիւնի սերտ մերձեցման կարևոր մարմիններից մեկը: Համանտնողաշխ կուլտուրայի, գիտութիւն, տեխնիկայի և գյուղատնտեսական գիտելիքների մի հզոր առաջնորդ է գյուղում: Այն որվանից, յերբ լքված բաժնակը կազմակերպվեց Համանտնողաշխում, սկսեց պայքարել որավարձի ավելացման, բանվորական ժամերի կանոնավոր բաշխման և աշխատանքի պաշտպանութիւն համար: Նա սկսում է կիրառել սոցիալական ապահովագրութիւն, պատրաստում է լավ ու հմուտ մասնագետներ, աշխատում է ժողովրդական լուսավորութիւն ձևակառուելու:

Մնացած միութիւններից միայն շաքարի-պարենի բանվորներն են, վորոնք Համանտնողաշխի նման ավելի ամբողջա-

կան դեմք ունեն, իսկ մյուսները միայն այն չափով, վորքան կապված են գյուղի տնտեսութիւն և գյուղատնտեսական արդյունաբերութիւն հետ:

Աշխատանքի գիտական կազմակերպութիւնի  
սակահ կազմա-  
կերպութիւն  
իւր գիւղերը  
գյուղում: Աշխատանքի գիտական կազմակերպութիւն  
խնդիրն այն է, վոր կարողանա հասնել աշխատանքի գերագույն արտադրողականութիւն, միաժամանակ լիովին պահպանելով աշխատավորութիւն ուժն ու առողջութիւնը:

Մի ժամանակ մեզ մոտ, իսկ Յեվրոպայում հենց հիմա, կապիտալիստներն ու կալվածատերերն զբաղված էին «աշխատանքի կազմակերպութիւն», բայց կապիտալիստական աշխատանքի «գիտական կազմակերպութիւն» ուսումնասիրում է այն միջոցները, վորոնցով կարելի է ավելի արագ ծծել բանվորի ամբողջ ուժն ու առողջութիւնը, բամբել բանվորի ամբողջ հյութը, իսկ զրանից հետո ինչ կուզի՝ թող լինի:

Մեր բանվորա-գյուղացիական պետութիւնն իսկական աշխատանքի գիտական կազմակերպութիւն առաջ խնդիր է դրել, վոր բանվորը, գործադրելով աշխատանքի լավագույն յեղանակները, լինի միշտ առողջ, կուշտ, լավ հագնված, վոր մինչև ծերանալը պահպանվեն նրա ուժերն ու առողջութիւնը: Այդ բանի համար հարկավոր են՝ աշխատանքի նորմալ արտադրութիւն, գյուղատնտեսական աշխատանքների համար լավագույն գործիքներ, մեծ չափերի հասնող արտադրողականութիւն՝ իրենց ուժերն ու առողջութիւնը պահպանելու համար:

Յեթե յերկրագործը սովորի, թե ինչպես պետք է աշխատել, այլ և այլ աշխատանքների ժամանակ ինչպիսի յեղանակներ պիտի գործադրել, այդ կպահպանի նրա ուժերը:

Աշխատանքի  
որեքնեքը գյուղում: Սորհրդային իշխանութիւնը, հանձնա աշխատանքի ժողովրդական կոմիտեարիատի, հոգում է, վոր վոչ մի սեփականատեր չհամարձակվի քամել բանվորից նրա ուժն ու հյութը:

Մանր տնտեսատերերը ձգտում են շուտ հարստանալ, ուստի հաճախ անխղճորեն խախտում են աշխատանքի որենքը (Որենքների ժողովածու), վորի պատճառով դատի տակ են

ընկնում: Յուրաքանչյուրը լավ պիտի իմանա աշխատանքի որենսդրութիւնը, վոր վարձու աշխատանքի ժամանակ տնտեսատիրոջ ճորտը չգառնա:

Աշխատանքի որենսդրի հիմնական որենքները պարզաբանելու և լրացնելու համար խորհրդային իշխանութիւնն անագին քանակութեամբ վորոշումներ ու լուսաբանութիւններ ե հրատարակել:

Աշխատանքի որենքների հրատարակութիւնը, վորը վորոշում ե բանվորական որը, աշխատանքի վարձը, պաշտպանութիւնը և այլն, կոչվում ե աշխատանքի բանվորական որենսդրութիւն:

Յերկրագործը պարտավոր ե անպայման լավ իմանալ գյուղանտառային տնտեսութեան վերաբերյալ աշխատանքի պաշտպանութեան բանվորական որենսդրութիւնը, իսկ այն յերկրագործը, վորը պարապում ե տնայնագործական արհեստներով, պիտի ծանոթ լինի տնայնագործական արդշունաբերութեան վերաբերող բանվորական որենսդրութեան, վորպեսզի գիտենա՝ ուր պետք ե դիմել, յետե վորեւ անհատ խախտելու լինի խորհրդային իշխանութեան որենքները:

Աշխատավորների անողջութեան և կապիտալիստների իշխանութեան որով, յերը նրանք աշխատավորութեան մեծ մասին անխղճորեն շահագործում եյին իրենց անձնական բարեկեցութեան և հարստութեան համար, Ռուսաստանում մահացութեան դեպքերը բարձր չափերի եյին հասնում: Այժմ բանվորագյուղացիական իշխանութիւնն իր բոլոր ուժը լարում ե բարելավելու աշխատավորների առողջութիւնը, նվազեցնելու մահացութիւններն ու հիվանդութիւնները և ցույց տալու ապագա առողջ կյանքի ուղին:

Քանի վոր գյուղական ազգաբնակչութեան մեջ տեղի ունեցող մահացութիւնների և հիվանդութիւնների պատճառը մեծ մասամբ նրա հետամնացութիւնն ու խավար դրութիւնն ե, անհրաժեշտ ե առանձնապէս լուրջ ուշադրութիւն դարձնել աշխատավորութեան առողջապահական լայն դաստիարակութեան վրա:

Քանի վոր գյուղական ազգաբնակչութեան մեջ տեղի ունեցող մահացութիւնների և հիվանդութիւնների պատճառը մեծ մասամբ նրա հետամնացութիւնն ու խավար դրութիւնն ե, անհրաժեշտ ե առանձնապէս լուրջ ուշադրութիւն դարձնել աշխատավորութեան առողջապահական լայն դաստիարակութեան վրա:

Գյուղացու և Գյուղացու թիւ 1. Առողջութեան պահպանման հետ սերտ կապ-  
գիւղական գործ-ված ե ֆիզիկական զարգացման հարցը: Անցյալ-  
գացման հոգա-ներում աշխատավորութեան անխղճորեն ու ան-  
հարուստները:

սահման հարստահարելն առաջ եր բերում մասսայական հիվանդութիւններ, անժամանակ մահացութիւններ և ալլաւերում:

Բանվորագյուղացիական պետութիւնը, վոր իր բոլոր ուժերը լարում ե աշխատավորութեան առողջութիւնը պահպանելու և նրա արտադրական աշխատանքը բարձրացնելու, չի կարող անուշադրութեան մատնել ֆիզիկական զարգացման գործը լայն հիմքերի վրա դնելու հարցը:

Պետական կենտրոնական ֆիզկուլտուրայի Ինստիտուտը հնարավոր յեղածին չափ լայն ուսումնասիրել ե հետեյալ հարցերը:

1. Ֆիզկուլտուրայի դերն աշխատավորութեան առողջութիւնը բարձրացնելու և պահպանելու գործում:

2. Ֆիզկուլտուրայի դերը բանվորական կարգեր վերստեղծելու ու նախապատրաստելու գործում:

3. Ֆիզիկական դաստիարակութեան գործի ներկա կացութիւնը բանվորագյուղացիական պետութեան մեջ:

4. Ֆիզիկական դաստիարակութեան ուղիները մեղմում և բուրժուական պետութիւնների մեջ:

Պրոլետարական ֆիզիկական զարգացում և նրա խնդիրները:

Աշխատանքը վորպէս պրոլետարական ֆիզկուլտուրայի մեթոդներից մեկը:

5. Ֆիզկուլտուրայի դերն ու ուղիները գյուղում:

6. Ֆիզկուլտուրայի տոները և նրա դերը բանվորագյուղացիական պետութեան հասարակական կյանքի մեջ:

7. Ֆիզկուլտուրայից ինչ սպասելիքներ ունի ապագան (նրա ազդեցութիւնը աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու և պահպանելու բանվորական ուժը):

Հոգաբարձութիւն Սոցիալական ապահովութեան ժողովրդական գյուղի ինքն-կոմիսսարիատի առաջ ծանր խնդիր եր դրված: Ինքնեթե:

Ծնունդ առնելով 1918 թվի ապրիլ ամսին, նա հին ռեժիմից, վորպէս ժառանգութիւն ստացավ մի շարք անկելանոցներ՝ ի 80-ամյա զառամյալ ծերունիներով ու պա-

ռազմերով, իմպերիալիստական պատերազմի ինվալիդների միանգամայն անապահով միլիոնավոր բանակ, ահագին քանակությամբ ինվալիդներ քաղաքացիական կռիվի, աշխատանքի ինվալիդներ, վորոնք այդ ժամանակվա աննպաստ պայմանների հետևանքով (բլոկադան և քաղաքացիական պատերազմը) անժամանակ կորցրել էին աշխատունակությունը: Այս բոլորին հարկավոր եր ապահովել և ոգնություն ցույց տալ, վերը, սակայն, համարյա անհնար եր, քանի վոր իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմները և բլոկադան հիմնովին քայքայել ու թուլացրել էին պետության նյութական կարողությունը:

Այժմ սոցիալական ապահովության ժողովրդական կոմիտեների և կարող ե ցույց տալ, թե վորքան ցայտուն տարբերություն կա Ս. Ս. Հ. Մ. սոցիալական ապահովության սխտեմի և հին, բուրժուական պետություններում գործադրվող սխտեմի մեջ, վորը, ավելի ճիշտն ասած, վոչ թե սոցիալական ապահովություն ե, այլ «խնամատարություն»՝ հիմնված բուրժուական հասարակությունից ստացված վորոքմությունների վրա:

Գլխավոր սկզբունքը, վորը դրված ե Ս. Ս. Հ. Մ. սոցիալական ապահովության հիմքում, ինվալիդների համար աշխատանքներ կազմակերպելն ե: Այդ նշանակում ե, վոր ինվալիդը, ինչ չափով ընդունակ ե վորևե աշխատանքի, կարող ե գործադրել իր, թեկուզ վոչ լրիվ, աշխատանքը արտադրության այն ճյուղում, դեպի վորը հակումն կամ ընդունակություն ունի: Այստեղից անհրաժեշտություն ե ծագում՝ սովորեցնել ու վարժեցնել արհեստների, այսինքն ստեղծել այնպիսի պայմաններ, վորի մեջ ինվալիդը հնարավորություն ունենա սովորելու (հաշվի առնելով ինվալիդության աստիճանն ու բնույթը) մատչելի և իր մասնագիտության ավելի համապատասխան աշխատանք կամ արհեստ, իսկ յեթե իր ինվալիդության բնույթն այդ խանգարում ե, այդ աշխատանքը տանելիս այնպիսի միջոցներ ձեռք առնել, վոր նա, իր ինվալիդությամբ հանդերձ, կարողանա ոգտակար հանդիսանալ: Այս նպատակին հասնելու հա-

մար (ինվալիդին աշխատանքի հաղորդակից դարձնելու) մոտ-սաստանում մինչև հեղափոխությունը գոյություն ունեցող զանազան աղքատանոցների, ապաստարանների և անկեղանոցների անկազմակերպ ցանցը, ուր խնամվողները միայն բեռ էին պետության համար, վոչ մի ոգուտ չբերելով նրան, վեր են ածվում կանոնավոր աշխատանքային հիմնարկությունների ցանցի, ուր ինվալիդների թերի աշխատանքներն արտադրության ամենաալագան ճյուղերի մեջ, հաշված և գյուղական տնտեսությունը, գտնում ե իր գործադրությունը:

Այսպիսով ինվալիդը հնարավորություն ե ստանում վերագտնալու արդյունավոր աշխատանքի:

Աշխատանքային պետության սոցիալական ապահովության յերկրորդ հիմնական տարբերությունն այն ե, վոր պետական ապահովության իրավունք տրվում ե միայն աշխատունակությունը կորցնելու դեպքում և այն ել, յեթե գոյությունը պահպանելու մի ուրիշ միջոց չկա:

Բայց վորքան ել սոցիալական ապահովության հիմունքները ճիշտ և լավ լինեն, կյանքում այն իրականացնելու համար, մեր տնտեսապես քայքայված պետության պայմաններում անհնար կլինեն (մանավանդ գյուղական տնտեսության պայմաններում), յեթե չզիվեյինք ընկերական փոխադարձ ոգնություն: Այդ նպատակով պետությունը կազմակերպեց գյուղական փոխադարձ ոգնության կոմիտեների ցանց, վորոնց միջոցով համագյուղացի ինվալիդներին շոշափելի ոգնություն ե ցույց տրվում վարելու, ցանելու և սերմացուի փախատվության միջոցով: Այս կոմիտեների ցանցն իր գոյության յերկու տարիների ընթացքում անասելի չափով աճել ե, առաջ բերելով յերկրագործական մասսաների մեջ հանրական կյանքով ապրելու ձգտում:


Վսրպեսզի անշատ անշատ ինվալիդները, հաշմանդամները ել ավելի զարգացնեն իրենց ինքնուրույնությունը, պետությունը սոցիալական ապահովության ժողովրդական կոմիտեների միջոցով նյութական աջակցություն ե ցույց տվել ինվալիդների արտերիների կոոպերատիվային կազմակերպություններ-

րին, վորոնք 1923 թվի փետրվարին միացել և կազմել են Հա-  
մառուսական ինվալիդների Կոոպերատիվ, վորի հսկայական  
տնտեսական նշանակութունը միայն հետագայում հաշվի կառնվի:

Անուշագրության մատնված չեն նմանապես իմպերիա-  
լիստական և քաղաքացիական պատերազմի ինվալիդները, վո-  
րոնք կորցրել են առողջութիւնը և վորոշ աստիճանի աշխա-  
տունակութիւնը (առանձնապես շատ են ինվալիդները, իհարկե,  
գյուղական ազգաբնակչության մեջ):

Դրա համար կազմակերպված է «Հիվանդ և վիրավոր կար-  
միր բանակայինների Համառուսական Ոգնության Կոմիտե»,—  
մի կազմակերպութիւն, վորը նույնպես ուժեղանում է և արդյու-  
նաբերության բոլոր ճյուղերի ահագին ցանց ունի:

(«Գյուղատնտեսական ցուցահանդեսի ուղեցույց»-ից):



## ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչպիսի աշխատանքներ է կատարում գյուղացին գարնանը, ամա-  
ռը, աշնանը և ձմեռը:
2. Ի՞նչ մասնակցութիւն ունեն այդ աշխատանքներին կանայք և  
յերեխաները:
3. Նկարագրեցէ՛ք այդ աշխատանքների բնույթն ու տեղութիւնը և  
համեմատեցէ՛ք ձեր գյուղի աշխատանքների հետ:
4. Ի՞նչն է գյուղացին դրսի և կողմնակի աշխատանքների յի դիմում:
5. Ի՞նչ տնային արհեստներ և տնայնագործական աշխատանքներ են  
կատարում ձեր գյուղում, շրջանում. և ի՞նչ բնույթ են կրում նրանք:
6. Ամառը քանի՞ ժամ է աշխատում գյուղացին, զեղջկուհին, բատրակը:
7. Այդ աշխատանքների վրէժ մասն է զուտ արտադրական, վրէժ՝ տնա-  
յին—տղամարդկանց և կանանց առանձին-առանձին:
8. Համեմատեցէ՛ք ձմեռվա և ամառվա աշխատանքների տեղութիւնը,  
հանգիստը, քուենը:
9. Համեմատեցէ՛ք գյուղացու և վարձու բանվորների ձմեռային աշ-  
խատանքը:
10. Կազմեցէ՛ք նոր աղյուսակ № 1 աղյուսակի ձևով, թվերը հարմա-  
րեցնելով ձեր գյուղի, շրջանի պայմաններին:
11. Գյուղացին քանի՞ ժամ է հատկացնում քնի, հանգստի:
12. Ի՞նչպէս է անցկացնում գյուղացին տոն որերը:
13. Բատրակի աշխատանքի տեղութիւնը ամառը, ձմեռը, ամբողջ  
տարին:
14. Վրէժքան և աշխատանքի ժամերի, որերի քանակը խորհրդային  
տնտեսութիւններում:
15. Գյուղացու արտադրական աշխատանքի տեղութիւն հարաբերու-  
թիւնը:
16. Աղյուսակ կազմեցէ՛ք գյուղացու արտադրական աշխատանքի մա-  
քին, թվերը վերցնելով ձեր շրջանից:
17. Համեմատեցէ՛ք գյուղացու արտադրական աշխատանքը գործարա-  
նային արդյունաբերության հետ:

18. Կանայք ի՞նչ աշխատանքների յեն մասնակցում և ի՞նչ չափով:
19. Ի՞նչպես պետք է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը գյուղում:
20. Համահանդող աշխ միության դերն ու գործունեությունը:
21. Աշխատանքի գիտական կազմակերպությունը կապիտալիստական յերկրներում և մեզնում:
22. Ի՞նչ է աշխատանքի բանվորական որենսդրությունը, և ի՞նչ է նրա դերը գյուղում:
23. Ի՞նչ միջոցներ են գործադրում իս. իշխանությունը գյուղացու առողջությունը պահպանելու համար:
24. Ֆիզիկական դաստիարակության դերն ու անելիքները գյուղում:
25. Սոցիալական ապահովությունը կապիտալիստական յերկրներում և մեզնում:
26. Վճրն է ի՞նչ, Միության սոց. ապահովության հիմնական սկզբունքը:
27. Ի՞նչ դեր է կատարում փոխ. ինքնագնությունը սոց. ապահովության խնդրում:
28. Կա՞ն ձեր շրջանում փոխ. ինքնագնության միություններ և ինվալիդների այլ կազմակերպություններ և ի՞նչ գործունեություն ունեն:

